ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/58

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Է. Չատինյանի (պետական գրանցման վկայական N 03Ա270823)

քննելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «ՑՆ-1,2 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին ավազաշիթային մաքրում և հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգում-4523մ2» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 05.08.2019թ. ներկայացված (06.08.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/58 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պրոթերմ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 05.08.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՑՆ-1,2 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին ավազաշիթային մաքրման և հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման ծառայությունների մատուցման նպատակով 08.05.2019թ. հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Գնման ընթացակարգին 16.05.2019թ. մասնակցել է չորս ընկերություն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն, «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն, «ՀԱՏՈՒԿԷՆԵՐԳԱՄՈՆՏԱԺ» ՍՊԸ-ի և «Ինտեր Դոր Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումը և «Անտիկոր ՕՍԿ»ՍՊԸ-ն:

2019թ. մայիսի 20-ին «Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրենը տեղեկացրել է պատվիրատուին, որ «ՀԱՏՈՒԿԷՆԵՐԳԱՄՈՆՏԱԺ» ՍՊԸ և «Ինտեր Դոր Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումը գնային առաջարկը ներկայացրել է սխալ՝ այն է լինելով համատեղ պայմանագրի կողմ գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ դաշտը լրացնելու:

2019թ. մայիսի 20-ին թիվ 2 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ի և «ԱնտիկորՕՍԿ» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժվել, իսկ «ՀԱՏՈՒԿԷՆԵՐԳԱՄՈՆՏԱԺ» ՍՊԸ-ի և «Ինտեր Դոր Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի ԱԱՀ-ի պահով պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ ֆինանսների Նախարարություն (արդյոք կոնսորցիումի պայմանագրով հանդես եկողը համարվում է ԱԱՀ վճարող, թե՝ ոչ):

2019թ. հունիս 6-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին է տրամադրվել «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊԵԿ կատարված հարցման պատասխանը (արդյոք կոնսորցիումի պայմանագրով հանդես եկողը համարվում է ԱԱՀ վճարող, թե՝ ոչ):

2019թ. հունիս 10-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն է տրամադրվել «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կատարված հարցման պատասխանը (արդյոք կոնսորցիումի պայմանագրով հանդես եկողը համարվում է ԱԱՀ վճարող, թե՝ ոչ).

2019թ. հունիսի 24-ին թիվ 3 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը ստանալով ՀՀ ֆինանսների Նախարարության պատասխանը՝ «ՀԱՏՈՒԿԷՆԵՐԳԱՄՈՆ-ՏԱԺ» ՍՊԸ և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել, միաժամանակ պահանջվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

2019թ. հուլիսի 2-ին թիվ 5 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովն առաջարկել է «Պրոթերմ» ՍՊԸ-ին մեկ օրվա ընթացքում շտկել տեղ գտած անհամապատասխանությունը:

2019թ. հուլիսի 11-ին թիվ 6 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը «Պրոթերմ» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից և առաջարկել կնքել պայմանագիր:

2019թ. հուլիսի 23-ին «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին է ներկայացվել իր իսկ կողմից ստորագրված և կնիքված պայմանագիրը:

2019թ. օգոստոսի 2-ին թիվ 7 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տնօրենի թիվ 1062 առ 02.08.2019թ.-ի հրամանը, «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը):

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետի՝ «...հրավեր՝ պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ» և նույն հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի՝ «... հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ»-ն է: Այսինքն՝ օրենքում հստակ նշված են հրավերի և հայտի բացատրությունները, որոնք էլ համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածում տեղ գտած օֆերտայի հասկացությանը.

1. Օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ:

Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները:

2. Օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից: Եթե օֆերտայի հետկանչի մասին ծանուցումն ստացվել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետ միաժամանակ, ապա օֆերտան համարվում է չուղարկված:

Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս օֆերտան համարվում է ստացված այն պահից, երբ այն մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված տեղեկատվական համակարգ, կամ հայտնաբերել է հասցեատերը, եթե այն ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը նշել է նաև, որ «Պրոթերմ» ՍՊ ընկերությունը օֆերտայի հետկանչի մասին ծանուցում չի ստացել ո՛չ օֆերտան ստանալուց առաջ, ո՛չ էլ դրա հետ միաժամանակ, այսինքն՝ կարող ենք նշել, որ օֆերտայի հետկանչի մասին ծանուցումը համարվում է չուղարկված:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ի մասի՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից, այսինքն՝ եթե կա հանձնաժողովի որոշում, ապա պատվիրատուի ղեկավարը պարտավոր է կնքել այդ պայմանագիրը: Այս նորմը համարվում է իմպերատիվ նորմ:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից, այսինքն՝ մայր Օրենսգիրքը հստակ սահմանում է, որ «Պրոթերմ» ՍՊ ընկերության կողմից ակցեպտավորված (ստորագրված) պայմանագրերը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին տրամադրելու պահից համարվում է ստորագրված:

Վերոգրյալը նաև հիմնավորվում է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 14-րդ ենթակետով. «...ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում...»:

Վերոգրյալից հետևում է, որ առնվազն 25.07.2019թ.-ին թիվ 03/46 պայմանագիրն օրենքի ուժով համարվել է կնքված և այս պարագայում չի կարող կիրառվել ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Ավելին՝ 2019թ. օգոստոսի 2-ի թիվ 7 արձանագրության 3-րդ կետով (տվյալներ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին) հստակ նշված է չկայացած համարելու հիմքը՝ տնօրենի 02.07.2019թ.-ի թիվ 1062 հրաման: Նշենք, որ պետական փակ բաժնետիրական ընկերությունների ոչ մի տնօրեն լիազորված չէ հայտարարել գնման պահանջի վերացման մասին, այդ հրամանի կիրառկումը թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով հանձնաժողովի կողմից առնվազն խախտում է ՀՀ Գնումների մասին օրենքը: Այսպես՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 58-րդ կետի «.... Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա» պետական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառումը կարող է բացառապես իրականացնել ընդհանուր կառավարումն իրականացնող լիազոր մարմնի ղեկավարը:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասի՝ ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է...:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ

իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՑՆ-1,2 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին ավազաշիթային մաքրման և հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. օգոստոսի 2-ի թիվ 7 արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշումը:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.08.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից 08.05.2019թ. հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որով կայանի կարիքների համար նախատեսվել է ձեռք բերել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՑՆ-1,2 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին ավազաշիթային մաքրման և հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգման ծառայություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.07.2019թ. ժամը 14:00-ին հրավիրված՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի ընթացքում, 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել է բավարար և վերջինիս ճանաչել ընտրված մասնակից, սակայն պայմանագրի կնքման և

հրավերով սահմանված ծառայության ձեռքբերման անհրաժեշտությունը դադարել է գոյություն ունենալ, քանի որ դադարեցվել է թիվ 1 և 3 հովացման աշտարակների արդիականացման գործընթացը՝ համաձայն Պատվիրատուի վերանորոգումների նախապատրաստման և կազմակերպման բաժնի պետ Օ. Գևորկյանի թիվ 4597 առ 31.07.2019թ. ծառայողական գրության:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետի համաձայն՝ կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ընդհանուր կառավարումն իրականացվող լիազորված մարմնի ղեկավարի որոշման վրա:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Մ. Վարդանյանի թիվ 1062 առ 02.08.2019թ. հրամանի հիման վրա, օգոստոսի 2-ին ժամը 15:20-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ՝ գնման գործընթացը չկայացած հայտարարելու նպատակով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը (գնման գործընթացը չկայացած է համարվում, եթե դադարում է գոյութոյն ունենալ գնման պահանջը) և հրաման արձակելու համար որպես հիմք ներկայացված փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.08.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պրոթերմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.07.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պրոթերմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 11.07.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2019թ. արտահերթ նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա հայտարարվել է չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 05.08.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 58-րդ կետի համաձայն՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Կարգի 14-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պրոթերմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.07.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պրոթերմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 11.07.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Օրենքով սահմանված անգործության ժամկետը լրանալուց հետո «Պրոթերմ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Համաձայն Ընկերության կողմից բողոքով ներկայացված պնդմանը՝ վերջինիս կողմից 23.07.2019թ. սահմանված կարգով ստորագրվել և Պատվիրատուին է ներկայացվել պայմանագիրը:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2019թ. արտահերթ նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա հայտարարվել է չկայացած:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 02.08.2019թ. թիվ 1062 հրամանով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «ՑՆ-1,2 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին ավազաշիթային մաքրում և հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգում-4523մ2» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ գնման պահանջը վերանալու հիմքով:

Նույն հրամանի հիմքում դրվել է ՎՆԿԲ պետ Օ. Գևորկյանի 31.07.2019թ. թիվ 4597 ծառայողական գրությունը, որի համաձայն՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 1 և 3 հովացման աշտարակների արդիականացման գործընթացների դադարեցման որոշմամբ (հիմք՝ 30.07.2019թ. թիվ Ե/35/1927-19 գրություն՝ ի պատասխան 29.07.2019թ. թիվ 309/03-02/5514 գրության) պայմանավորված՝ տեխնիկական տեսանկյունից նպատակահարմար չէ գնման գործընթացի շարունակումը:

«Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերությանն ուղղված 30.07.2019թ. թիվ Ե/35/1927-19 գրությամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենը հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի շահագործման համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի ժամկետի լրացման, նոր ֆինանսավորման աղբյուրների որոնման, ինչպես նաև նույն գրության մեջ մատնանշված առավել հրատապ միջոցառումների իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է դադարեցնել գնման գործընթացը, քանի որ գրության մեջ նշված միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները դեռևս հայտի չեն (արժեքը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հնարավորություններից դուրս է):

Այսպիսով՝ վերոհիշյալ գրությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գրությունների մեջ մատնանշված պատճառներով Պատվիրատուի մոտ վերացել է իր կարիքների համար «ՑՆ-1,2 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին

ավազաշիթային մաքրում և հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի նորոգում-4523մ2» ծառայությունների գնման պահանջը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***<u>Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝</u>***

1) <u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.</u>

2) <u>գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:</u>

Գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվում է նշված գնումը, իսկ նման պահանջի վերացնման դեպքում՝ ընթացակարգը չի կարող շարունակվել:

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով ընթացակարգը չկայացած է հայտարարվել Ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելուց հետո: Ընդ որում՝ Ընկերության կողմից հաստատվել և Պատվիրատուին է ներկայացվել պայմանագիրը:

Այս տեսանկյունից հայտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը և այլն), և կարող են նախատեսվել այդ պահանջները չպահպանելու հետևանքներ: Եթե նման հետևանքներ նախատեսված չեն, ապա կիրառվում են գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելու հետևանքները (298 հոդվածի 1-ին կետ):

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի նախագծի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, հետևաբար միայն Ընկերության կողմից հաստատված լինելու հանգամանքը չի կարող դիտարկվել բավարար պայման պայմանագիրը կնքված համարելու համար, քանի որ Պատվիրատուի կողմից իր հերթին չի հաստատվել պայմանագիրը, որը պարտադիր նախապայման է հանդիսանում պայմանագիրը կնքված համարելու համար:

Միևույն ժամանակ Օրենքը նախատեսում է մի շարք դեպքերում, այդ թվում նաև՝ գնման պահանջը վերանալու դեպքում գնման գործընթացը, քննարկվող դեպքում արդեն իսկ պայմանագիր կնքելու փուլում, պայմանագիր կնքելու առաջարկը (օֆերտա) չեղյալ համարելու (ընթացակարգը չկայացած հայտարարելու) Պատվիրատուի իրավական հնարավորությունը: Եվ անհրաժեշտ է նկատել, որ Օրենքը չի նախատեսում որևէ նախապայման այն մասին, թե Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ընթացակարգը որ փուլում կարող է հայտարարվել չկայացած: Տվյալ դեպքում Ընթացակարգը հայտարարվել է չկայացած մինչև պայմանագիրը կնքվելը, քանի որ պայմանագիրը դեռևս հաստատված չի եղել Պատվիրատուի կողմից:

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-31/19» ծածկագրով ընթացակարգը չկայացած է հայտարարվել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 02.08.2019թ. թիվ 1062 հրամանով: Այս տեսանկյունից Կարգի 58-րդ կետը սահմանում է, որ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի որոշման հիման վրա, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը սահմանում է, որ Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից, հետևաբար «Հայկական ատոմային

էլեկտրական» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի կողմից կայացված որոշումը Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 05.08.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**